COVID-19. ՀԵՐԹԱԿԱՆ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐ, ԹԵ ՆԱԽԱԶԳՈՒՇԱՑՈՒՄ

Հիմնաբառեր. *թագավարակ, COVID-19, համավարակ, աշխարհաքաղաքականություն, գլոբալացում, ճգնաժամ, քաղաքակրթություն*

Վարդան ԱԹՈՅԱՆ

Քաղաքական գիտությունների դոկտոր, դոցենտ

2002 թ. ավարտել է ԵրՊՏԻ-ն (այժմ՝ ՀՊՏՀ), 2010 թ.՝ ԵԽ քաղաքական դասընթացների երևանյան դպրոցը, 2015 թ.՝ ՀՀ ԱԳՆ դիվանագիտական դպրոցը: 2004 թ.-ին ստացել է գիտությունների թեկնածուի, 2018 թ.՝ դոկտորի գիտական աստիճան: 2018 թ.-ից առ այսօր ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տնօրենի տեղակալ-ավագ փորձագետ է: 2012 թ.-ից մինչ օրս դասավանդում է ՀՊՏՀ իրավագիտության և քաղաքագիտության ամբիոնում: Ամերիկյան քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Վաշինգտոն) և Ռուսաստանի քաղաքական գիտության ասոցիացիայի (ք. Մոսկվա) անդամ է: Հեղինակ է 60-ից ավելի գիտական հրապարակումների:

ORCID ID: https://orcid.org/0000-0002-4974-0312

Հոդվածը նվիրված է COVID-19 համավարակի աշխարհաքաղաքական, տնտեսական և սոցիալական ազդեցության խնդիրների քննարկմանը: Ներկայացվում են մի շարք ռիսկեր, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել համավարակի համաշխարհային տարածման համատեքստում: Հեղինակը անդրադարձ է կատարում նաև մարդկային քաղաքակրթության անվտանգ ապագայի ապահովման տեսակետից կենսական նշանակություն ունեցող այլ հարցերի ևս:

Ներածություն

Աշխարհին պատուհասած թագավարակի ծագումը, տարածումն ու հետևանքները դեռևս երկար ժամանակ կլինեն փորձագիտական հանրույթի քննարկումների և ուսումնասիրությունների առանցքում: COVID-19-ի մասին դիտարկումներ են անում բժիշկները, կենսաբանները, տնտեսագետները, քաղաքագետները, հոգեբանները և այլ ոլորտների ներկայացուցիչներ: Համավարակն ամբողջ ծավալով ի ցույց դրեց մարդկային քաղաքակրթության խոցելիությունը և աշխարհում ձևավորված տնտեսական, քաղաքական, առողջապահական ու անվտանգության համակարգերի թերությունները՝ չխնայելով ոչ զարգացած, ոչ զարգացող երկրներին, ոչ հարուստներին, ոչ անապահովներին, ոչ ազատականներին, ոչ ազգայնականներին, ոչ շարքային քաղաքացիներին և ոչ էլ վերնախավին: Ակնհայտ է, որ դեռևս վաղ է ամփոփել համավարակի թողած ավերիչ հետևանքների ամբողջ ծավալն ու խորությունը, սակայն մեկ բան կարող ենք հստակ արձանագրել՝ հետթագավարակյան աշխարհը

նույնը չի լինելու:

Ներկա համավարակը լիովին կարելի է դասել XXI դարում մարդկային քաղաքակրթությանը մինչ այս պահը նետված ամենամեծ մարտահրավերների շարքին: Արդյո՞ք այս ամենը պատահականության արդյունք էր: Նման իրավիճակները միշտ պարարտ հող են ստեղծում դավադրության տեսության հետևորդների համար: Վերջիններս վարակի ծագումը դիտարկում են որպես որևէ երկրի հատուկ ծառայությունների կամ գլոբալ խամաճիկավարների կողմից տարաբնույթ դավադիր նպատակներով իրականացված գործողություն կամ կենսաբանական դիվերսիա, որոշները՝ որպես կենդանուց մարդուն վարակի անցման հերթական նախադեպ, հասարակության մեկ այլ հատված՝ որպես բնության նկատմամբ մարդու անխնա և գիշատչային պահվածքին հասցեական պատասխան և այլն: Անշուշտ, հնչող կարծիքները և դրանց ճշմարտացիության վերաբերյալ բերվող փաստարկներն ու հիմնավորումները կարող են տարբեր լինել, սակայն մի բան ակնհայտ է՝ իր էությամբ թագավարակն ահազանգ է:

Վերլուծություն

COVID-19 մարդկության՝ համավարակի հետ բախման ամենևին առաջին նախադեպը չէ: Ավելին, պատմությունից հայտնի են առավել ավերիչ հետևանքներով համավարակներ: XIV-XV դարերում միայն Եվրոպայում, տարբեր գնահատականներով, «Սև մահ» անվանումը ստացած ժանտախտի զոհ է դարձել 15-34 միլիոն մարդ՝ այդ աշխարհամասի բնակչության մոտ մեկ երրորդը: Ամբողջ աշխարհում «Սև մահը» խլել է ավելի քան 60 միլիոն մարդու կյանք: 1918 թ. Իսպանիայում բռնկված, այնուհետև կայծակնային արագությամբ ամբողջ աշխարհում տարածված վարակը փոխանցվել էր շուրջ 500 միլիոն մարդու՝ այդ պահին աշխարհի բնակչության մեկ չորրորդին: Որոշ գնահատականների համաձայն՝ «Իսպանուհի» անվանակոչված գրիպը մոտ մեկ ու կես տարում խլել է մինչև 50 միլիոն մարդու կյանք: Վերոնշյալները միայն օրինակներ են՝ մարդկությանը տարբեր ժամանակաշրջաններում պատուհասած տիֆի, մալարիայի, ՁԻԱՀ-ի և բազմաթիվ այլ՝ միլիոնավոր կյանքեր խլած վարակների շարքում:

Թագավարակն իր հետևից թողնում է տասնյակ հազարավոր զոհեր, խեղված ճակատագրեր, համաշխարհային տնտեսությանը հասցված աղետալի վնասներ և դեռևս իմաստավորման ենթակա աշխարհաքաղաքական հետևանքներ: Լրացուցիչ մտահոգություն է փոխանցում այն, որ համավարակը մուտք է գործում այնպիսի տարածաշրջաններ և երկրներ, որոնց առողջապահական համակարգը բավական թույլ է զարգացած, ինչը կարող է շեշտակիորեն մեծացնել վարակակիրների թիվը: Բացի այդ, համավարակից պաշտպանվելու համար մարդկանց մեկուսացումն ու ինքնամեկուսացումը մեծապես խթանում են՝ առանց այդ էլ թվային դարաշրջանին բնորոշ կախվածությունը կիբեռտիրույթից: Հատկապես այս ընթացքում մարդիկ ժամանակի մեծ մասն անց են կացնում համացանցում՝ աշխատանքի, ուսումնառության, տեղեկատվության ստացման կամ փոխանակման, տարաբնույթ ծառայություններից օգտվելու կամ, պարզապես, ժամանցի նպատակով: Նման իրավիճակում էլ ավելի կենսական նշանակություն է ստանում կրիտիկական ենթակառուցվածների անխափան գործառնության, այդ թվում՝ կիբեռանվտանգության ապահովումը, քանի որ որևիցե պատճառով համացանցի երկարաժամկետ խափանումը կարող է ունենալ տնտեսական, սոցիալական և քաղաքական անկանխատեսելի հետևանքներ:

Գլոբալացվող աշխարհում COVID-19 համավարակն ազդարարեց աշխարհաքաղաքական տեկտոնական տեղաշարժերի հերթական փուլի սկիզբը, որի հետևանքները տեսանելի ապագայում առավել ակնհայտորեն կդրսևորվեն: Կարելի է ենթադրել, որ գլոբալացված և տնտեսապես չափազանց փոխկապակցված աշխարհն արագորեն մտնում է փոխակերպման փուլ: 2014 թվականին ԱՄԷ-ում կայացած միջազգային գիտաժողովում՝ «Գլոբալացումը և ազգային պետության կերպափոխումը» զեկույցում կարծիք էինք հայտնել, որ վերջին տասնամյակների միտումները ցույց են տալիս, որ ավանդական

քաղաքական տարածության կործանման պայմաններում իրական իշխանությունն աստիճանաբար փոխանցվում է նոր դերակատարների, ինչպիսիք են վերազգային կորպորացիաները, միջազգային և ոչ կառավարական կազմակերպությունները, որոնց գործողություններն ու շահերը շատ հաճախ ընդհանուր հսկողությունից դուրս են: Նույն զեկույցում նշել էինք, որ գլոբալացման գործընթացները կերպափոխում են պետության ավանդական ինստիտուտը, որը շեշտակիորեն կորցնում է իր «կշիռը»[1]: Սակայն, COVID-19-ի գլոբալ հետևանքները արագորեն փոփոխում են վերջին տասնամյակների հիմնական միտումները, և առավել նկատելի են դառնում այլ գործընթացներ, որոնք առավելապես հիշեցնում են հատվածավորվող, մասնատվող, այլ ոչ թե համահարթեցվող աշխարհ: Արդյո՞ք առաջիկայում կպահպանվեն այդ միտումները, թե՞ ի հայտ կգան նորերը, կամ, միգուցե, ամեն ինչ կվերադառնա ի շրջանս յուր, ցույց կտա ժամանակը: Այնուամենայնիվ, ներկա պահին կարող ենք անել երկու դիտարկում.

1. «Շախմատային մեծ տախտակի» աշխարհաքաղաքական վերափոխումները և ուժային կենտրոնների աշխարհառազմավարական վերադասավորումները մշտապես ուղեկցվել են տնտեսական և քաղաքական մեծ ցնցումներով, որոնք, սովորաբար, արտահայտվում են տարաբնույթ ճգնաժամերով, հիբրիդային, միջնորդավորված (proxy) հակամարտություններով, իսկ վատագույն դեպքում՝ համաշխարհային պատերազմով:

2. Ազգային պետությունները դեռևս պահպանում են իրենց կենսունակությունը: Ավելին, արտաքին անհամաչափ սպառնալիքով պայմանավորված, բազմաթիվ երկրներում նկատելի են դառնում ինքնիշխանական եսակենտրոնության աճի միտումներ, որոնք տարբեր տարածաշրջաններում հակասություններ և ճգնաժամեր են հրահրում նույնիսկ ռազմավարական դաշնակիցների միջև:

Հատկանշական է, որ վերոնշյալ միտումները նկատելի էին նույնիսկ մինչև համավարակի բռնկումը, և այս համատեքստում պատահական չեն փորձագիտական շրջանակներում արտահայտվող այն տեսակետները, որ համավարակը կանխեց հասունացող մեծ պատերազմը: Միաժամանակ, այս գործընթացները հիմք են տալիս ենթադրելու, որ ակադեմիական շրջանակներում «պետության վախճանի» վերաբերյալ ժամանակին ակտիվորեն շրջանառվող դատողությունները գոնե այս պահին ձևավորվող իրավիճակին այդքան էլ համարժեք չեն, և տեղին է վերահաստատել տարիներ առաջ մեր մեկ այլ հրապարակման մեջ արտահայտած կարծիքն այն մասին, որ XXI դարը հակոտնյա արժեքների, աշխարհընկալումների և քաղաքակրթությունների դիմակայության ակտիվացման ժամանակաշրջան է[2]:

COVID-19 ծանրագույն հարված հասցրեց նաև համաշխարհային տնտեսությանը, որի ռեցեսիան նույնիսկ լավատեսների մոտ այլևս կասկած չի հարուցում: Տնտեսագիտական շրջանակների գնահատմամբ՝ համավարակի հետևանքները շատ ավելի ազդեցիկ են լինելու, քան նույնիսկ 2008-2009 թթ. տնտեսական ճգնաժամի պարագայում էր: Արդյունաբերության, առևտրի, զբոսաշրջության, ծառայությունների և այլ ոլորտներին ու ճյուղերին հասցված տնտեսական վնասը հաշվարկվում է միլիարդավոր դոլարներով: Աշխարհին սպառնում է սոցիալական լարվածության անկառավարելի աճ, որը, իր հերթին, հղի է քաղաքական անկայունություններ հրահրելու լրջագույն ռիսկերով: Առկա են փորձագիտական գնահատականներ, որ մինչև առաջիկա ամառ միայն ԱՄՆ-ում շուրջ 3 միլիոն մարդ կկորցնի աշխատանքը[3]: Հեղինակավոր Foreign Policy ամսագրի հոդվածագրի պատկերա-

[1] Vardan Atoyan, "Globalization and Transformation of the Nation State," International Conference on Arts, Economics and Management (ICAEM'14), March 22-23, 2014, Dubai (UAE): 83.

[2] Josh Bivens, "Coronavirus shock will likely claim 3 million jobs by summer," Economic Policy Institute, accessed March 26, 2020, https://www.epi.org/blog/coronavirus-shock-will-likely-claim-3-million-jobs-by-summer/

[3] Josh Bivens, "Coronavirus shock will likely claim 3 million jobs by summer," Economic Policy Institute, accessed March 26, 2020, https://www.epi.org/blog/coronavirus-shock-will-likely-claim-3-million-jobs-by-summer/

վոր ձևակերպմամբ՝ եթե նախորդ համաշխարհային տնտեսական ճգնաժամը ֆինանսական սրտի կաթված էր, ապա այս մեկը կարող է կաթվածահար անել ամբողջ մարմինը[4]:

Քննարկվող թեմայի համատեքստում հատուկ անդրադարձի է արժանի մեկ այլ կարևոր հարց, որի առավել համակողմանի ուսումնասիրությունը, թերևս, համապատասխան ոլորտի փորձագիտական շրջանակների խնդիրն է: Այսպես՝ համաշխարհային ֆիլմարտադրության մեջ հատկապես վերջին մի քանի տասնամյակներում կտրուկ մեծանում է վախճանաբանական (apocalyptic) և հետվախճանաբանական (post-apocalyptic) սյուժեով կինոնկարների և հեռուստասերիալների քանակը: Դրանցում ներկայացվում են աղետների ժամանակ գոյության համար պայքար մղող մարդկանց ճակատագրեր, աշխարհի կործանման կամ քաղաքակրթության կործանումից հետո վերապրածների կյանքի պատումներ: Հանրահայտ IMDb ֆիլմերի տվյալների համացանցային շտեմարանի որոնողական համակարգում Post-Apocalypse բանալի բառով որոնման արդյունքում մենք նույնականացրել ենք համանման բովանդակությամբ 1242 ֆիլմ[5]: Կարող ենք ասել, որ ներկայում այդ սյուժեն համարվում է ժամանակակից ֆիլմարտադրության, այսպես ասած, մեյնսթրիմային ուղղություններից մեկը, որը հատկապես արևմտյան հասարակության շրջանում բավական մեծ պահանջարկ է վայելում:

Հատկանշական է, որ վերոնշյալը վերաբերում է ոչ միայն հոլիվուդյան ֆիլմերին: Վերջին քառորդ դարում այս սյուժեով ֆիլմեր են նկարահանվում Ճապոնիայում, Հարավային Կորեայում, Իսպանիայում, Ավստրալիայում, Մեծ Բրիտանիայում, Չեխիայում և բազմաթիվ այլ երկրներում: Հետաքրքրական է, որ այս միտումը կարելի է նկատել նաև գրականության և տեսախաղերի արտադրության ոլորտներում: Ի՞նչ է սա նշանակում: Արդյո՞ք մարդկությունը ենթագիտակցորեն նախապատրաստվում է նման սցենարների:

Ինչպես նշում է հետազոտող, մշակութաբան Այուր Սանդանովը, տվյալ սյուժեի արդիականության էական գործոններից է այն, որ մշակույթում առաջին պլան է դուրս եկել մարդկային տեսակի գոյության պատմական նշանակության խնդիրը: Տիեզերքի ծավալների անիմանալիությունը, մարդկային քաղաքակրթության հարաբերականորեն կարճ պատմությունը, և կարևորը՝ դրա փխրունությունը, խոցելիությունը բնական աղետների և տեխնածին վտանգների նկատմամբ ու, վերջապես, յուրաքանչյուր անձի հակվածությունը քարոզչության ու մոլորության, ինչը հանգեցնում է արյունալի պատերազմների, բոլոր այս գաղափարներն այսօր դարձել են տարածված, կենցաղային գիտակցության մաս: Դա նշանակում է, որ գեղարվեստական ստեղծագործությունները, որտեղ տեղի է ունենում ընդհանրապես մարդկության ճակատագրի և կյանքի վերաիմաստավորում, որտեղ արծարծվում են մարդու գոյատևման և իր տան՝ Երկիր մոլորակի պահպանման վերաբերյալ հարցեր, անուղղակիորեն դուրս են գալիս պարապ երևակայության կամ, այսպես կոչված, հատվածային զվարճանքների սահմաններից՝ ձեռք բերելով կենսական հրատապություն[6]:

Եզրակացություն

Ամփոփելով նշենք, որ եթե այսօր համավարակի տարածման դեմ պայքարի առաջնագծում առողջապահության ոլորտի ներկայացուցիչներն են, ապա դրա հետևանքների վերլուծության, վերացման և հետթագավարակյան աշխարհակարգի կառուցման գործում առաջնորդությունը փոխանցվելու է տնտեսագետներին, քաղաքագետներին, հոգեբաններին, մշակութաբաններին և այլ ոլորտների մասնա-

[4] Adam Tooze, "Is the Coronavirus Crash Worse Than the 2008 Financial Crisis?," Foreign Policy, accessed March 18, 2020, https://foreignpolicy.com/2020/03/18/coronavirus-economic-crash-2008-financial-crisis-worse/

[5] IMDb, accessed March 25, 2020, https://imdb.to/39m7s02

[6] Санданов А. Б., Постапокалиптический сюжет в американском кино: история развития и место в современном кинематографе // Афтореф. дисс. на соис. уч. ст. кандидата искусствоведения по спец. 17.00.03 - «Кино-, теле-, и другие экранные искусства», М., 2013, с. 4

գետներին: Այս ճգնաժամը պետությունների ու հասարակությունների համար կառավարման արդյունավետության, բարոյական արժեհամակարգի, հոգեբանական պատրաստվածության և կազմակերպվածության մակարդակի յուրատեսակ ստուգատես է: Հայտնի է, որ ամեն մի ճգնաժամ, իր ողբերգականությամբ և պատճառած վնասներով հանդերձ, նաև նոր հնարավորություն է: Ինչպես բնության մեջ, այնպես էլ այլ հարթություններում և չափումներում խավարին մշտապես հաջորդում է լուսաբացը, քաոսին՝ կանոնավորությունը, փոթորկին՝ անդորրը: Ինչպե՞ս կօգտագործի մարդկությունը հերթական անգամ իրեն տրվող հնարավորությունը: Կշարունակի՞, արդյոք, կիրառել արդեն իսկ իրենց կենսունակությունն ու արդյունավետությունը կորցրած և ապակառուցողական՝ տնտեսական, քաղաքական, վարքաբանական մոդելներ, կշարունակի ցուցաբերել անխնա վերաբերմունք արարչագործությամբ ստեղծված բնության նկատմամբ, հրահրել եսակենտրոն սպառման ու սպառազինությունների մրցավազք, թե՞ իր ստեղծագործական միտքը կուղղի ներդաշնակությանը, համերաշխությանը և բնականոն զարգացմանը միտված մոդելների ստեղծմանը: Ի՞նչ դասեր կքաղեն և ինչպե՞ս կարձագանքեն այս նախազգուշացմանը պետությունների վերնախավերն ու որոշում կայացնողները և, ի վերջո, ի՞նչ բարոյական արժեհամակարգի և նորմերի վրա կհենվի հետթագավարակյան աշխարհը: Սրանք են այն հարցերը, որոնց պատասխաններից է նաև կախված Երկիր մոլորակի և մարդկային քաղաքակրթության ապագան:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Санданов А. Б., *Постапокалиптический сюжет в американском кино: история развития и место в современном кинематографе* // Афтореф. дисс. на соис. уч. ст. кандидата искусствоведения по спец. 17.00.03 - «Кино-, теле-, и другие экранные искусства», М., 2013, 26 с.
2. Tooze, Adam. “Is the Coronavirus Crash Worse Than the 2008 Financial Crisis?,” Foreign Policy, accessed March 18, 2020, https://foreignpolicy.com/2020/03/18/coronavirus-economic-crash-2008-financial-crisis-worse/
3. Atoyan, Vardan. “Challenges of Information Security in the Context of New World Order Formation: View from Armenia,” *Almanach Via Evrasia,* 2014, 3, http://www.viaevrasia.com/en/4-challenges-of-information-security-in-the-context-of-new-world-order-formation-view-from-armenia-vardan-atoyan.pdf
4. Atoyan, Vardan. “Globalization and Transformation of the Nation State,” *International Conference on Arts,* Economics and Management (ICAEM'14), March 22-23, 2014, Dubai (UAE): 81-84.
5. Bivens, Josh. “Coronavirus shock will likely claim 3 million jobs by summer,” *Economic Policy Institute,* accessed March 26, 2020, https://www.epi.org/blog/coronavirus-shock-will-likely-claim-3-million-jobs-by-summer/
6. IMDb. Accessed March 25, 2020, https://imdb.to/39m7s02

Вардан АТОЯН
Заместитель директора-старший эксперт исследовательского центра «Амберд», АГЭУ, доктор политических наук, доцент

COVID-19: ОЧЕРЕДНОЙ ВЫЗОВ ИЛИ ПРЕДУПРЕЖДЕНИЕ?

Статья посвящена обсуждению проблем геополитического, экономического и социального воздействия коронавирусной инфекции COVID-19. Выявлены ряд рисков, которые необходимо учитывать в контексте глобального распространения пандемии. Автор также затрагивает вопросы, имеющие жизненно важное значение для обеспечения безопасного будущего человеческой цивилизации.

Ключевые слова: *коронавирус, COVID-19, пандемия, геополитика, глобализация, кризис, цивилизация*

Vardan ATOYAN
Deputy Director & Senior Expert of AMBERD Research Center, Armenian State University of Economics, Doctor of Sciences (Political Science), Associate Professor of Political Science

COVID-19: THE NEXT CHALLENGE OR AN ALARM?

The article discusses the issues of geopolitical, economic and social impact of coronavirus disease (COVID-19) on human civilization. A number of risks have been identified that need to be considered in the context of the global spread of the pandemic. The author also addresses issues of vital importance for ensuring a secure future for human civilization.

Keywords: *coronavirus, COVID-19, pandemic, geopolitics, globalization, crisis, civilization*